

**Ուշադրություն- Գործում նշված COVID 19-ով պայմանավորված սահմանափակումների թվականները կարող են չհամընկնել իրական թվականներին եվ չպետք է հայցն ու պատասխանը պատրաստելիս նկատի առնվեն:**

**Թիրանո Է.Է.Սի  
Ընդդեմ  
Բրուտ ՍՊԸ**

**1-** «Բրուտ» ՍՊԸ-ն («**Բրուտ**») Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է, որն ունի սալիկների արտադրման գործարան և ցանկություն ունի բարելավել և ընդարձակել իր արտադրողական հնարավորությունները՝ գործարանին կից արտադրամասում տեղադրելով տեխնիկապես ավելի այժմեական սարքավորումներ:

**2-** «Բրուտ» ՍՊԸ-ն, իր նպատակն իրագործելու համար, սալիկների արտադրման սարքավորումներ վաճառող մի քանի ընկերությունների հետ բանակցելուց հետո, իտալական Թիրանո Է.Է.Սի («**Թիրանո**») ընկերության հետ 2020 թվականի մարտի 15-ին կնքում է առուվաճառքի պայմանագիր («**Գնման Պայմանագիր**»)՝ երկու կողմ արտադրական հոսքագծի («**Ապրանք**») գնման համար:

**3-** Պայմանագրում նախատեսված են հետևյալ պայմանները՝

\*\*\*\*\*

**«Հոդված 4-** Պայմանագրի գինը («**Պայմանագրի Գին**») 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար է, որը հաշվարկված է հնկոթերմզ C/F կարգով և ներառում է նաև Ապրանքի փոխադրման և ապահովագրման ծախսերը:

**Հոդված 5-** Բրուտը պարտավորվում է 100,000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար Պայմանագրի Գինը Թիրանոյին վճարել հետևյալ կարգով՝

**5.1-** 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար՝ որպես կանխավճար՝ Պայմանագրի ստորագրման թվականից 15 օրվա ընթացքում:

**5.2-** 50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլար՝ ի դիմաց Ապրանքի առաքումը և փոխադրման ընթացքում ապահովագրումը ապացուցող բեռնագրի և ապահովագրի:

(1) Բրուտը պարտավոր է վերոնշյալ գումարը Թիրանոյին վճարել Ապրանքի առաքման մասին Թիրանոյի Էլեկտրոնային նամակը և Ապրանքի առաքումը ապացուցող բեռնագրի և ապահովագրի պատճենները ստանալուց հետո 3 օրվա ընթացքում:

(2) Թիրանոն պարտավոր է վերոնշյալ գումարը ստանալուց հետո 3 օրյա ժամկետում Ապրանքի առաքման բեռնագրի և ապահովագրի օրիգինալները ուղարկել Բրուտին՝ Ապրանքի մաքսագերծումը ՀՀ-ում հնարավոր դարձնելու համար:

**5.3-** Պայմանագրի Գնի վերջին՝ 25,000 ( քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարը Բրուտի կողմից Թիրանոյին կվճարվի երկու հանգրվանում՝

(1) 15,000 (տասնհինգ հազար) ԱՄՆ դոլար՝ Ապրանքը ՀՀ մաքսատուն հասնելուց հետո առավելագույնը 3 օրյա ժամկետում,

(2) 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլարը՝ Ապրանքի մաքսագերծումից հետո առավելագույնը 3 օրյա ժամկետում՝ պայմանով, որ Թիրանոն լրացրած լինի կամ լրացնի բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են Ապրանքի մաքսագերծման համար:

**5.4** Ապրանքի՝ ՀՀ-ում մաքսագերծման բոլոր ծախսերը հոգում է Բրուտը:

**Հոդված 24-** Այս Գնման Պայմանագրի՝ կողմերից մեկի կողմից իր պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Պայմանագրի մյուս կողմն իրավունք ունի մյուս կողմին գրավոր ծանուցելով խզել Պայմանագիրը, եթե ծանուցման մեջ նշված խախտումը չի վերացվում ծանուցման թվականից առավելագույնը 10 օրվա ընթացքում:

\*\*\*\*\*

**4-** Պայմանագրում ոչ մի նախատեսություն չկա Պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունքի և Պայմանագրից բխող հավանական վեճերի լուծման կարգի կապակցությամբ:

**5-** Պայմանագրի ստորագրումից 15 օր հետո՝ 2020 թվականի մարտի 30-ին, Բրուտի և Թիրանոյի միջև կնքվում է պայմանագիր («**Տեղադրման Պայմանագիր**»), որի մեջ նախատեսված են հետևյալ պայմանները.

\*\*\*\*\*

«**Հոդված 2-** Թիրանոն պարտավորվում է 2020 թվականի մարտի 15-ին ստորագրված Գնման Պայմանագրով Բրուտին վաճառված հոսքագծերը («**Սարքավորումներ**») տեղադրել դրանց տեղադրման համար Բրուտի կողմից իր գործարանին կից կառուցված արտադրամասի շենքի («**Շենք**») մեջ:

**Հոդված 3-** Բրուտը իր այս Տեղադրման Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կիրականացնի Իտալիայից գործուղված ազգությամբ իտալացի մասնագետների միջոցով՝ օգտվելով նաև տեղացի մասնագետ և մասնագիտական պատրաստություն չունեցող մարդուց: Այս նպատակի համար նախատեսվում է ազգությամբ իտալացի 7 մասնագետների այցև ու առավելագույնը 3 ամիս կեցությունը ՀՀ-ում: Իտալացի մասնագետների՝ ՀՀ-ում կեցության ծախսերը հոգում է Բրուտը:

**Հոդված 4-** Բրուտը պետք է Շենքի շինարարական աշխատանքներն ավարտվելուց հետո Թիրանոյին գրավոր ծանուցի այդ մասին, որից հետո Թիրանոն պարտավոր է Սարքավորումների տեղադրման աշխատանքները սկսել ծանուցումը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում, պայմանով, որ Բրուտի կողմից ապահովված լինի Սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ՝ Թիրանոյի մասնագետների ուղեգրերի և ՀՀ-ում ժամանակավորապես բնակվել և աշխատելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները:

**Հոդված 5-** Այս Տեղադրման Պայմանագրով Թիրանոյի կողմից իրականացվող աշխատանքների վարձատրության գումարն է 50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլար, որը Բրուտի կողմից Թիրանոյին կվճարվի հետևյալ կարգով՝

5.1- 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար՝ Թիրանոյի կողմից Սարքավորումների տեղադրման աշխատանքները սկսելու օրվանից 7 օրյա ժամկետում:

5.2- 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար՝ Սարքավորումների տեղադրման աշխատանքները սկսելուց թվականից 30 օր հետո:

5.3- 20,000 (քսան հազար) ԱՄՆ դոլար՝ Սարքավորումների տեղադրման աշխատանքները սկսելու թվականից 60 օր հետո:

5.4- 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար՝ Սարքավորումների տեղադրման բոլոր աշխատանքները ավարտվելուց և հաջողությամբ փորձարկվելուց հետո 5 օրյա ժամկետում:

**Յոթերորդ 23-** Այս Տեղադրման Պայմանագրի կողմերից մեկի կողմից իր պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Պայմանագրի մյուս կողմն իրավունք ունի, մյուս կողմին գրավոր ծանուցելով, խզել Պայմանագիրը, եթե ծանուցման մեջ նշված խախտումը չի վերացվում ծանուցման թվականից առավելագույնը 10 օրվա ընթացքում:

**Յոթերորդ 24-** Այս Տեղադրման Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը՝:

**Յոթերորդ 25-** Այս Տեղադրման Պայմանագիրը անկախ պայմանագիր է, բայց մաս է կազմում Բրուտի կողմից իրականացվող՝ Բրուտին պատկանող սալիկների արտադրման գործարանի ընդարձակման և արդիականացման ծրագրին, որի կապակցությամբ այս Պայմանագրի կողմերի միջև 2020 թվականի մարտի 15-ին ստորագրվել է հոսքագծերի Գնման Պայմանագիրը:

**Յոթերորդ 26-** Այս Տեղադրման Պայմանագրից կամ դրա կատարումից առաջացած բոլոր հավանական վեճերը լուծվում են ադ-հոք արբիտրաժով՝ երեք արբիտրից կազմված Տրիբունալի միջոցով: Վեճի յուրաքանչյուր կողմ ընտրում է մեկ արբիտր և կողմերի կողմից ընտրված արբիտրները ընտրում են երրորդ՝ նախագահող արբիտրին: Արբիտրաժի վայրն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքը, լեզուն՝ հայերեն:

Այս հոդվածը կիրառելի է նաև Գնման Պայմանագրից կամ դրա կապակցությամբ առաջացող վեճերի դեպքում:»

\*\*\*\*\*

6- Գնման Պայմանագրի ստորագրումից հետո՝ 2020 թվականի մարտի 29-ին, Բրուտը Թիրանոյին է վճարում Գնման Պայմանագրի 5.1 հոդվածում նախատեսված 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարը:

7- Թիրանոն 2020 թվականի հուլիսի 30-ին Էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Բրուտին, որ Ապրանքն առաքվել է հուլիսի 29-ին և նամակին է կցում համապատասխան բեռնագրի և ապահովագրի պատճենները: Թիրանոն նույն օրը բեռնագրի և ապահովագրի օրիգինալները ԾԽԼ-ի միջոցով ուղարկում է Բրուտին՝ այդ մասին նաև Էլեկտրոնային գրությամբ տեղյակ պահելով Բրուտին և նույն Էլեկտրոնային նամակին կցելով ԾԽԼ-ի բեռնագրի պատճենը:

**8-** Բրուտը 2020 թվականի օգոստոսի 2-ին բանկային փոխանցումով Թիրանոյին է վճարում Գևման Պայմանագրի 5.2 հոդվածում նախատեսված 50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը:

**9-** Բրուտը 2020 թվականի օգոստոսի 13-ին Էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Թիրանոյին, որ Սարքավորումների տեղադրման համար կառուցվող Շենքի շինարարական աշխատանքներն արդեն ավարտվել են և Թիրանոն կարող է Ապրանքի մաքսագերծումից հետո Տեղադրման Պայմանագրի 4-րդ հոդվածում նախատեսված 30 օրյա ժամկետում սկսել Սարքավորումների տեղադրման աշխատանքները:

**10-** Թիրանոն 2020 թվականի օգոստոսի 15-ին Էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Բրուտին, որ «COVID 19-ի» բռնկման պատճառով անորոշ ժամանակով, ի շարս այլ սահմանափակումների, փակված են սահմանները՝ Իտալիայից արտասահման ճամփորդելու համար, և այդ պատճառով իր համար հնարավոր չէ ներկա պահին ծրագրավորել իր մասնագետների գործուղման թվականն ու դրան առնչվող այլ մանրամասները:

**11-** Ապրանքը 2020 թվականի օգոստոսի 28-ին հասնում է ՀՀ մաքսակետ և 2020 թվականի սեպտեմբերի 2-ին մաքսագերծվում:

**12-** Մաքսագերծումից անմիջապես հետո Բրուտը 2020 թվականի սեպտեմբերի 2-ին Էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Թիրանոյին, որ Ապրանքը մաքսագերծված է և պահանջում Թիրանոյից գրավոր տեղեկացնել իր մասնագետների ՀՀ հասնելու և Սարքավորումների տեղադրման աշխատանքները սկսելու համար նախատեսված թվականները:

**13-** Թիրանոն 2020 թվականի սեպտեմբեր 3-ին Բրուտին է ուղարկում հետևյալ Էլեկտրոնային նամակը՝

«Քանի որ COVID 19-ի պանդեմիայի պատճառով (1) անկախատեսելի ժամանակով կիրառված են Իտալիայից արտասահման ճամփորդելու կապակցությամբ սահմանափակումներ, և, (2) անկախ այդ սահմանափակումներից, Թիրանոն չի կարող վտանգել իր մասնագետների առողջությունն ու կյանքը, նրանց պարտադրելով ճամփորդել արտասահման, և (3) մասնագետներից շատերը ևս կարող են նույն պատճառներով մերժել արտասահման ճամփորդելը և շուրջ 3 ամիս բնակվելն այլ երկրում, ուրեմն և Թիրանոյի համար ներկա պահին և անորոշ ժամանակով հնարավոր չէ կատարել Տեղադրման Պայմանագրի 3-րդ և 4-րդ հոդվածներում նախատեսված պարտականությունները: Այս կապակցությամբ հայցում ենք Ձեր ըմբռնումն ու ներողամտությունը»:

**14-** Բրուտը վերոնշյալ Էլեկտրոնային նամակը ստանալու հաջորդ օրը՝ 2020 թվականի սեպտեմբերի 4-ին, հետևյալ Էլեկտրոնային նամակն է ուղարկում Թիրանոյին՝

«Ստացել ենք Ձեր 3 սեպտեմբեր 2020 թվակիր գրությունը: Հասկանալով հանդերձ պանդեմիայով պայմանավորված բարդությունները՝ քանի որ մեզ համար անհրաժեշտ է ժամանակին գործարկել նոր արտադրամասը, տեղեկացնում ենք, որ Գևման Պայմանագրի 5.3 հոդվածով նախատեսված 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարը կվճարվի Ձեզ միայն Ձեր կողմից՝ մասնագետների ՀՀ ուղարկելու և տեղադրման աշխատանքների մեկնարկի և իրականացման ժամանակացույցի մասին գրավոր ծանուցում ստանալուց և Ձեր այդ պարտականությունների կատարման մասին վստահանալուց հետո»:

**15-** Թիրանոն 2020 թվականի սեպտեմբեր 7-ին հետևյալ էլեկտրոնային նամակն է հղում Բրուտին:

«Ձարմացած ենք՝ ստանալով Ձեր սեպտեմբեր 4-ի գրությունը: Գնման Պայմանագրի 5.3 հոդվածով վճարվելիք Պայմանագրի Գնի վերջին մասնավճարը ոչ մի կերպ առնչություն չունի Թիրանոյի կողմից Տեղադրման Պայմանագրով ստանձնած պարտավորությունների հետ, որոնց կատարումը Ձեզ քաջ հայտնի պատճառներով հնարավոր չէ անկանխատեսելի ժամանակով: Դուք ստացել և մաքսագերծել եք Ապրանքը և պարտավոր եք վճարել դրա գինը:

Առ այդ, Ձեզ ժամանակ ենք տալիս այս գրության թվականից մինչև 10 օր մեզ վճարել Գնման Պայմանագրի 5.3 հոդվածում նախատեսված 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարը: Հակառակ դեպքում պարտավոր ենք առաջացած վեճի լուծման համար սկսել Տեղադրման Պայմանագրի 26-րդ հոդվածում նախատեսված արբիտրաժային գործընթացը»:

**16-** Բրուտը Թիրանոյի վերոնշյալ նամակում սահմանված 10 օրյա ժամկետում չի կատարում պահանջված վճարումը: Փոխարենը՝ 2020 թվականի սեպտեմբերի 20-ին հետևյալ էլեկտրոնային գրությունն է հղում Թիրանոյին՝

«Քանի որ Ձեր ընկերությունը ոչ մի կերպ պատրաստ չէ Տեղադրման Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման ժամանակացույցի և ընդհանրապես այդ պարտավորությունների կատարման պատրաստակամության մասին մեզ համար ընդունելի հավաստիք ներկայացնել, այս գրությամբ Տեղադրման Պայմանագրի 23-րդ հոդվածի ուժով՝

- (1) Խզում ենք Տեղադրման Պայմանագիրը, բացառությամբ, եթե այս գրության թվականից 10 օրյա ժամկետում մեզ ներկայացնեք մեզ համար ընդունելի ապացույց, որ ճշտված և մեզ համար ընդունելի ժամկետում սկսելու եք կատարել այդ Պայմանագրով ստանձնած Ձեր պարտավորությունները:
- (2) Տեղադրման Պայմանագիրն ինքնաբերաբար խզված կհամարվի, եթե (1)-ին կետում նշված մեր պահանջները իրականացված չլինեն նույն կետում սահմանված 10 օրյա ժամկետի ավարտին:
- (3) Քանի որ Տեղադրման Պայմանագրում նախատեսված Ձեր պարտականությունների չկատարման արդյունքում մեզ համար հնարավոր չի եղել և չի լինելու Գործարանի ընդարձակման և արդիականացման աշխատանքները նախատեսված ժամկետում և, անգամ դրանից հետո, ավարտին հասցնել, որի հետևանքով մենք կրել ենք վնաս, ընդ որում՝ մեր հաճախորդների հետ պայմանավորված թվականին պահանջված ապրանքը չհանձնելու և նախատեսված հասույթն ու շահը չապահովելու տեսքով, ու նաև, քանի որ ներկա պայմաններում պարտավոր ենք Սարքավորումների տեղադրման համար նոր պայմանագիր կնքել մի երրորդ մասնագետ ընկերության հետ, որը ոչ միայն կարող է ավելի մեծ գումարի վճարման անհրաժեշտություն առաջացնել, այլև ժամանակի առումով ավելի ուշացնել նոր արտադրամասի գործարկումը, ուրեմն և տեղեկացնում ենք, որ մեր ներկա և հետագա վնասների հատուցման դիմաց մեզ ենք պահում Գնման Պայմանագրի 5.3 հոդվածում նշված 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարը»

**17-** Թիրանոն անպատասխան է թողնում Բրուտի վերոնշյալ նամակը և 2020 թվականի հոկտեմբերի 4-ին Էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Բրուտին, որ Գնման Պայմանագրի 5.3 հոդվածով նախատեսված 25,000 (քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարի և նույն գումարի վճարման ուշացման պատճառով որպես տույժ վճարվող տոկոսի վճարման պահանջով սկսում է արբիտրաժի գործընթացը: Թիրանոն նույն նամակում նշանակում է իր արբիտրին:

**18-** Բրուտը, ի պատասխան, 15 հոկտեմբեր 2020 թվակիր նամակով նշանակում է իր արբիտրին: Կողմերի կողմից նշանակված երկու արբիտրները 2020 թվականի հոկտեմբեր 30-ին փոխհամաձայնությամբ նշանակում են երրորդ՝ նախագահող արբիտրին և կողմերին տեղեկացնում այդ մասին:

**19-** Արբիտրաժի գործընթացը կողմերի և արբիտրների համաձայնությամբ ժամանակավորապես կասեցվում է Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև բռնկված պատերազմի, դրան հաջորդող՝ ՀՀ-ում տիրող պայմանների և COVID 19-ով վարակված հիվանդների թվի աճի պատճառով:

**20-** Արբիտրներն առաջին նիստն են կայացնում 2021 թվականի հունիսի 30-ին և կազմում են արբիտրաժի ժամանակացույցը՝ կողմերից պահանջելով ներկայացնել իրենց գրավոր դիրքորոշումները:

**21-** Մանրամասն հայցի և պատասխանի և փաստաթղթերի փոխանակումից հետո, Տրիբունալի առաջին նիստը կայանում է առցանց կարգով՝ 2021 թվականի նոյեմբերի 20-ին, որից հետո Տրիբունալը կողմերին ուղղորդում է առկայության դեպքում մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը ներկայացնել իրենց հավելյալ ապացույցները, առարկություններն ու դիրքորոշումները:

**22-** Բոլոր փաստաթղթերի և գրավոր դիրքորոշումների փոխանակումից հետո արբիտրաժի նիստը կայանում է 2022 թվականի ապրիլի 23-ին: